

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

Ֆ. Կ. ԿՈՆԵԲԵՐԻ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԳՈՆՅԻ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ԴԱՐԱՇԲԱՆՈՒՄ» ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՅԱՅՏ ԲՆԱԳԻՐԸ

Summary

In 2001 the author published a selection of hundred articles of the English armenologist, F. C. Conybeare (1856-1924) under the title *The Armenian Church: Heritage and Identity*, with introduction (St. Vartan Press, New York, 2001, xxiv, 952 pp.) dedicated to the 1700th Anniversary of Christianity in Armenia. During my research I had access to the collections of the London Library, to which F. C. Conybeare had donated his library in 1925. In his donation there are two unique items. First, his English translation of Nicholas Adontz's monumental thesis *Armenia in the Period of Justinian*. Printed in St. Petersburg in 1908 and second, an unknown edition of “*Yachkhapatoum Carak*” printed in Calcutta in 1813.

Among the 12 Armenian early books he left to the London Library, most of which are duplicated titles discarded by the Bodleian Library, the most unique, unrecorded by Armenian bibliographers is an edition of “*Yachkhapatoum*” [«Յաճախատում» ճառք] printed in Calcutta in 1813 by Awet Jntloumian (*Gentleman*). Until the discovery of this edition three printings were known of this work: two of Constantinople (1737 & 1824) and Venice (1838). Modern publications include Venice 1954 and Tehran, 2003 (modern Eastern Armenian translation). The only critical edition is still that of Arshak Ter-Mik'elian printed in Ejmiadsin, 1894).

All the books contain interesting inscriptions including a letter in German inserted into the covers of John Chrysostom's *Commentary on the Epistles of St Paul* (Venice, 1862) to Conybeare by the Mkhitarist scholar Yakobos Tashian (1866-1933).

Ծանոթություն

The London Library-ին Լոնդոնի բացառիկ գրադարաններից մեկն է։ Յունիս 24-ին, 1840թ. սկոպտացի համրահանաչ գրող, պատմաբան և կենսագիր Թոմաս Կարլայլը (*Thomas Carlyle*, 1795-1881), մի հաւաքի ընթացքին բարձրացնում է մայրաքաղաքում մի փոխատու (*lending*) գրադարան հաստատելու հարցը։ Նրա երազանքն արդիւնաւորուեց 3 Մայիս, 1841թ, Լոնդոնի ամենամեծ և շփեղ գրադարանի բացումով, որի գրքերի հաւաքածոն պարունակում է 1,000 000 ամուսն գիրք, որից հնագոյնը 1500 թ. և 2,000 ամսագրեր՝ հնագոյնը 1699 թ.։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին աւելի քան 16,000 գիրք ոչնչացուեց։

Գրադարանի բացումից յետոյ, նրա ընթերցողների շարքում յիշում են անգլիական գրականութեան մեծագոյն դիմեր - Ջարլզ Դիքենս, Ջեյմս Էլիոտ, Հենրի Ճեյմս, Արթուր Կոնան Դոյլ, Ճորճ Պետնար Շո, Ագաթա Քրիստի և շատ ուրիշներ։ Գրադարանի նախագահների շարքին յիշտակում են Ուիլիլմ Գլադստոն, Լորտ Տենիսոն, Ուինսթոն Չերչիլ և ուրիշներ։

Գրադարանի երախտապարտ ընթերցողներից է եղել նաև Կոմիտէն, որի հարուստ գրադարանը յետ մահու, 1925 թ. կտակուել է գրադարանին։ Նրա հարուստ գրադարանից շատ քիչ բան է մնացել։ Այս հաղորդագրութեան նպատակն է ներկայացնել այդ մնացորդի երկու ամենակարեւոր

արժեքները՝ հայ բանասերների համար:

Ֆրանսիացի հայագետ Ատուլֆ Շրումպֆ (G. A. Schrumphf) *Լոնդոնում կայացած «Իններորդ Միջազգային Արեւելեան համագումարին (1890-1891)՝ «Հայագիտութիւնը Անգլիայում նիւթի շուրջ»*, իր զեկուցման մէջ ցաւով յայտնում է, թէ «ինչպէս Անգլիոյ մէջ չեն երեւցած երբեք հայագէտք: Բայց հիմա իմաստուն անգլիացի մը մեծ յոյս կու տայ կարելոր արդեանց իր անխոնջ քննադատական ուսումնասիրութեամբ լեզուին Հայոց: Այս անձն է Ֆրետերիկ Կ. Կոնիբերը (Frederick Cornwallis Conybeare, 1856-1924)»¹:

Երբ ազգովին պատրաստուում էինք տօնելու մեր երկրի պաշտօնական քրիստոնէացման 1700-ամեակը, Ս. Վարդան հրատարակչութիւնը լոյս ընծայեց Ֆ. Կ. Կոնիբերի մօտ հարիւր յօդուածների ժողովածոն, որոնք նա գրել էր 1888-1924 թթ. միջեւ եւ տպագրել քառասունհինգից աւելի պարբերականներում: Յօդուածները նուիրուած են արեւելեան քրիստոնէութեան գրական, հոգեւոր, ինչպէս եւ աստուածաբանական մշակոյթի հայ եկեղեցու թողած աւանդին՝ «Հայ եկեղեցին: Աւանդը եւ իմֆանաւաչութիւնը» վերնագրով²: Գ. Մէնէլիշեանը «Հանդէս Ամսօրեայում», իր գրախօսականի մէջ՝ նուիրուած հեղինակի «Բանալի ճշմարտութեան»³ գրքին, գրել է. «Օքսֆորդի ուսուցչապետի հայրենագիտութեան վրայ զարմանք, թէ իւր մտաց բեղմնաւորութեան... Տարի չանցնիր, որ մէկ կամ երկու՝ համառօտ կամ ընդարձակ տետր՝ արդիւնք մանրակրկիտ քննութեանց չհրատարակէ Կոնիբերը»⁴: Նրա ամէն մէկ յայտնաբերումը հայ թարգմանական գրականութեան հազուագիւտ բնագրերի, մեծ աղմուկ էր հանում քրիստոնէական վաղ շրջանի պատմութեան գիտական շրջանակներում: Յայտնի է բանասէրներին նրա յայտնաբերումը՝ Ապողինարի (1894), Պետրոս Մոնգուս Աղեքսանդրի պատրիարքի նամակագրութիւնը Կ. Պոլսոյ պատրիարք Ակակիոսի հետ (1905), Խիկարի խրատների հայկական տարբերակը (1898), Արիստոն գրիչը՝ հեղինակ Մարկոսի Աւետարանի վերջին տասներկու համարների (1893), Արիստոտելի Կատագորիաների հին հայկական եւ յունական համեմատական բնագրերի հրապարակումը (1892), Յովսէփի եւ Բարադամի զրոյցը (1896), Յայտնութեան գրքի հայկական բնագրի կապը Կիւրեղ Աղեքսանդրացու հետ (1907), Դիոնիսիոս Աղեքսանդրացու նամակը Ստեփանոս եւ Խեքստոս պապերին (1910), Եփրեմ Ասորու «Մեկնութիւն Գործք Առաքելոցի» (1926), Հին հայերէն Իրենիոսի թուականը (1911), Յովսէփոս պատմագրի հայկական տարբերակը (1908), Պղատոնի հայկական օրէնքների տարբերակը (1891) եւ բազմաթիւ այլ ուշագրաւ հրապարակումներ, որոնք մշտապէս իրեն պահում էր բանասէրների ուշադրութեան կենտրոնում:⁵ Նրա անմնացորդ սէրն ու նուիրուածութիւնը դէպի հա-

¹ G. A. Schrumphf, *Les Etudes des Armeniennes en Europe (Siccles XIV-XIX)* (Ուսումնասիրութիւնք Հայ լեզուի եւ մատենագրութեան Յարեւմուտս (ԺԴ-ԺԺ), Թարգ. Զարքիանալեան Հ. Գ.), Վենետիկ, 1895, էջ. 356-359:

² F. C. Conybeare, *The Armenian Church Heritage and Identity*. Compiled with Introduction, by the Revd. Nerses Vrej Nersessian, New York, 2001, pp. 952, Կարադեւան Խ., «Կոնիբեր» ՀՄՀ, հտ. 5, էջ. 570:

³ V. Nersessian, *The Tondrakian Movement. Religious movements in the Armenian church from the fourth to the tenth centuries*, London, 1987, pp.89-96. 1893-ին Կոնիբերը Գ. Տէր Մկրտչեանի միջոցով ստանում է արտագրութիւնը Էջմիածնի մատենադարանում պահուած «Բանալի ճշմարտութեան», եւ հրատարակում է, հայ բնագրով, անգլերէն թարգմանութիւնը, ծանօթագրութիւններով եւ յաւելումներով: *The Key of Truth: a manual of the Paulician Church of Armenia*. The Armenian text, edited and translated with illustrative documents and introduction by F. C. Conybeare M. A. formerly fellow of the University College Oxford. Oxford, 1898. Ձեռագրի մայր օրինակը այժմ գտնւում է Մատենադարանում 6710 համարի տակ, իսկ Գալուստ Սարկ. Տէր Մկրտչեանի ընդօրինակածը Բրիտանական Գրադարան ձեռ. 7596 համարի տակ: Տե՛ս F. C. Conybeare, *A Catalogue of Armenian Manuscripts in the British Museum*, London, 1913, No. 103, pp. 261-63., Տէր Մկրտչեան Գ., Հայագիտական ուսումնասիրութիւններ, Գիրք Ա, Երեւան, 1979, էջ. 180.

⁴ «Հանդէս Ամսօրեայ», 1898, էջ. 219.

⁵ R. W. Thomson, *A bibliography of classical Armenian literature to 1500 AD*, Turnhout, 1995, pp. 29- 88, Vrej Nersessian, *Armenia (World Bibliographical Series, vol.163)*, Oxford, 1993, Vrej Nersessian, *A Bibliography of*

յագիտութեան, վկայում է այս հատուածը, որ նա գնում է «Բանալի ճշմարտութեան» գրքի իր ձեռքով գրուած հայերէն յիշատակարանում. «Ես Ֆրետերիկ Կոնիբեր տրուպս ուսուցչաց Ոսֆորդի, հայագետ և հայասէր յետ գտանելոյ յաշխարհի մեծաց հայոց օրինակ մի մատենից այսորիկ, որ կոչի Բանալի ճշմարտութեանն, բազում աշխատութեամբ և ջանիւք ի լոյս ածի զսա, և ի լեզու մայրենի իմ անգղիական թարգմանեցի: Այլ տպագրեալ է մատեանս այս հոգեշահ, հրամանաւ և ծախիւք վարդապետացն և իմաստնոցն, յամի տեառն մերոյ ՌՊՂէ»⁶: Անգլիայի Գիտութիւնների Ակադեմիան ստեղծուեց 1901 թ. որին հայագիտիւնը ներկայացնող անդամ ընտրուեց քաղաքական գործիչ եւ պատմաբան Ճէյմս Վիսկունթ Պրայսը [Viscount James Bryce, 1838-1922] եւ կարճ ժամանակ յետոյ 1903 թ. Ֆ. Կ. Կոնիբերը:⁷ Ֆրանսիացի հայագետ Լ. Մարիէսը (L. Maries), իր՝ Կոնիբերին գրած մահագրականին (1926) կցում է նրա աշխատութիւնների ցանկը, որը յետագային լրացնում են Ա. Ղազիկեանը (1909-12), Յ. Անասեանը (1959)⁸:

1904 թ. Ֆրանսիացի հայագետ Ֆրետերիկ Մակլերը հրատարակում է իր Ֆրանսերէն թարգմանութիւնը՝ «Պատմութիւն Սերետսի էպիսկոպոսի ի Հերակլին»⁹: Կոնիբերն այս գրքի գրախօսականի մէջ շատ ուշագրաւ տեղեկութիւն է յայտնում, ըստ որի. «Դոկտ. Վենթզելը (Wentzel), նախկինում գրադարանաւար Օքսֆորդի Հնդկական Ինստիտուտի, Սերետսի պատմութիւնը թարգմանել էր անգլերէն եւ յանձնել Մ. Աուգուստէ Կարիէրին (M. Auguste Carriere), որը յանձնեց ինձ որոշ ժամանակ յետոյ, երբ նրա տաղանդաւոր թարգմանիչը մահացել էր: Դրա հետ եւս մի ուրիշ թարգմանութիւն, որ կատարել էր Դոկտ. Գրիգորեանը (Dr. Gregorian of Constantinople) Կ. Պոլսում, ես ուշադրութեամբ համեմատեցի թարգմանութիւններն իմ կատարած թարգմանութեան հետ ուր տարի առաջ: Բայց դրա հրատարակութիւնը ինչ-ինչ պատճառներով յետաձգուեց եւ երբ Մ. Մակլերի սքանչելի ֆրանսերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ, մեր թարգմանութիւնը դարձրեց անելորդ»¹⁰:

Կոնիբերի յօդուածների հատորեակը պատրաստելիս, «Լոնդոնի Գրադարանում» յայտնաբերեցի հայ հնատիպ գրքերի մի փոքրիկ հաւաքածոյ, որը Կոնիբերի մահից յետոյ (1924) կտակուել էր գրադարանին 1925 թ.: Պրպտումների ընթացքում յայտնաբերեցի նաեւ Ֆ. Կոնիբերի անգլերէն թարգմանութիւնը Ն. Ադոնցի՝ «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում» աշխատութիւնը՝ 1908 թ. ռուսերէն բնագրի հիման վրայ: 1987 թ. հայերէն թարգմանութեան առիթով ակադեմիկոս Գ. Խ. Սարգսեանն իր «Նիկողայոս Ադոնցի գլուխ գործոցը» պատմա-բանասիրական վերլուծութեան մէջ գրում է. «Հարկաւ, նրա [Ադոնցի] հայերէն թարգմանութեան եւ հրատարակման խնդիրը հասունացած էր եւ կարող էր լուծուել նաեւ տասնամեակներ առաջ: Սակայն այսօր էլ այն ոչ միայն ուշացած չէ, այլեւ ուշացած չէր լինի, եթէ հրատարակուէր եւս տասնամեակներ անց: Համաշխարհային պատմագիտութեան մէջ քիչ հետազոտութիւններ կան, որ ժամա-

articles on Armenian studies in western journals, 1869-1995, London, 1997:

⁶ F. C. Conybeare, Key of Truth նշում աշխ. յիշատակարան, Ղազիկեան Ա., նշում աշխ. էջ. 1341:

⁷ Charles J. Frank Dowsett, 'The Madman has come back again': Byron and Armenian', JSAS, 4 (1988/1989), p. 34: Հայագիտութեան առաջին ամպիոնը հաստատուեց Օսֆորդի Համալսարանում 1965թ., որի առաջին ղեկավար նշանակուեց Զարգ Դաուսթը (1924-1998) եւ մնաց այդ պաշտօնի վրայ մինչեւ 1991 թ.:

⁸ L. Maries, 'Frederick Cornwallis Conybeare, (1856-1924), Notice biographique et bibliographie critique', REA, VI, 2 (1926), pp. 185-333, A. Lazikian, Nouvelle bibliographie armenienne et encyclopedie de la vi armenienne 1512-1902, Vienna, 1909-12, pp. 1329-54; H. S. Anasyan, Haykakan Matenagitut'yun, vol. I, Erevan, 1976, pp. 611-16.

⁹ Frederic Macler, Histoire d'Heraclius, Paris. 1904.

¹⁰ Գրախօսութիւն The English Historical Review, XX (1905), pp. 552-54; F. C. Conybeare, The Armenian Church Heritage and Identity, նշում աշխ. p.888., Միակ անգլերէն թարգմանութեան համար տե՛ս. The Armenian History attributed to Sebeos, Translated, with notes, by R. W. Thomson, Historical commentary by James Howard Johnson. Assistance Tim Greenwood. Part I-II. Liverpool, 1999.:

նակին այսպիսի քննութեան են ենթարկուել. պատմական հետազոտութիւնները մեծ մասամբ սակաւակեաց են»¹¹: Նինա Գ. Գարսոյեանն իր անգլերէն թարգմանութեան նախաբանում գրում է. «Աւելի քան կէս դար է անցել Նիկողայոս Ադոնցի «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում» անգերազանցելի աւարտաճառի հրապարակումից՝ 1908 թ., որը վկայուած է լինելու թէ շրջադարձային եւ նաեւ ուղեցոյց հայագիտութեան ասպարէզում, թէեւ ձեռքբերումը գրքի, եւ ոուսերէն լեզուի անմատչելիութիւնը, գրքին տուել է կիսա-առասպելական փաստաթղթի համբաւ, փոխանակ արժէքաւոր գործիք»¹²:

Անուանի պատմաբան Ն. Ադոնցի «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում» Ծ. Կ. Կոնիքերի մենագրութեան սոյն թարգմանութիւնը մինչեւ այսօր՝ թարգմանուած «Լոնդոնի Գրադարան»-ի հաւաքածոյի մէջ, մեծ հայագէտի աշխատութիւնների փայլուն շարքը լրացնող էջերից մէկն է՝ արժանի մանրամասն հետազոտութեան:

Ձեռագրի նկարագրութիւնը

N[icholas] Adontz, *Armenia in the epoch of Justinian*, English translation by Frederick Cornwallis Conybeare.

Երկու հատոր՝ իւրաքանչիւրը կազմուած 14 գծաւոր դպրոցական տետրերից, 30 տող վարժ նոսրգիր գրութիւն՝ սեւ թանաքով: Տետրեր արտադրած հիմնարկի անուանումը դրոշմուած ոսկեայ տառերով “Colins Golden series nr. 106/108”: Դարչնագոյն խաւաւարտ կազմ՝ դրոշմուած “Adontz Armenia in the Epoch of Justinian”. Ձեռագրի աստաղը կանաչ կտաւ եւ արտաքին առջեւի կազմի վրայ փակցուած կարմիր մի պիտակ՝ դրոշմուած “London Library, St James’s Square S. W. F. C. Conybeare Bequest”. Ոսկեայ տառերով արձանագրութիւնը զրքի կողին յայտնում է “Adontz, Armenia, Conybeare’s Ms. Tr [anslation]” եւ ներքեւում ձուածեւ կնիքի մէջ ձեռագրի համարները՝ Nr. 2660 (առաջին հտ.) եւ 2661 (երկրորդ հտ.): Առջեւի կազմի ներքին երեսին փակցուած է սպիտակ մի թուղթ՝ վերնագրուած “London Library, St. Jame’s Square, S. W. Extracts from the Rules”:

Առջեւի պահպանակի երեսին փակցուած կայ մի դրոշմուած թղթիկ, որը ցոյց է տալիս, թէ ձեռագիրը փոխ է տրուել մի ընթերցողի Մարտ 22-ին եւ 23-ին եւ Ապրիլ 27-ին՝ 1976 թ.: Երկրորդ պահպանակի վրայ Կոնիքերն իր ձեռնով գրել է “Adontz, Armenia in epoch of Justinian”. «Լոնդոն Գրադարան»-ի ձուածեւ պիտակի մէջ ամրացուած երկու հատորների տիտղոսաբերքերի հակադարձ երեսներին կայ արձանագրութիւն, որը տալիս է ձեռագրերի մուտագրման թուականը որպէս «5 Սեպտեմբեր, 1939».

Չափսերը՝ 21 x 16 սմ.

Bar code 3804400438-7217 (vol. I)

էջ. 17 Բովանդակութիւն

էջ. i-xiv Առաջաբան Introduction

¹¹ Նիկողայոս Ա., Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացութիւնը ըստ նախարարական կարգերի, Ռուս. թարգմ. Խոնդկարեան Ա. Թ., Երեւան, 1987, էջ. 550, Սարգսեան Գ., «Նիկողայոս Ադոնցի գլուխ գործընդ» Պատմագիտական հետազոտութիւններ, Երեւան, 2006, էջ. 177, Զօպանեան Ա., Նիկողայոս Ադոնց. բազմավաստակ բանասէրը «Անահիտ», ԺՆ տարի No. 1 (1949), Յուլբաշեան Կ. Ն., Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգութիւնը, ՊԲՀ, No. 4 (1962):

¹² “For more than half a century since its publication in 1908, Nicholas Adontz’s monumental thesis on Armenia in the Period of Justinian has proved to be both a landmark and a guidepost in the field of Armenian studies although its general inaccessibility, either from the rarity of procurable copies ,or from linguistic difficulties, has made of it far too often a semi-legendary document rather than a useful tool”, **Nicolas Adontz**, Armenia in the period of Justinian. The political conditions based on the Naxarar system. Translated with partial revisions. A bibliographical note and appendices by **Nina G. Garsoian**, Louvain, 1979,p.xv.

Գլուխ I***Political Divisions of Armenia (Հայաստանի քաղաքական բաժանումը)*¹³**

- Historical surroundings of Armenia and her position among neighbouring lands – Divisions into Western or Byzantine and Eastern or Persian Armenia- Lines of demarcation from Dara to Theodosiopolis and into the Black Sea – Chief points on this lines and the frontier points-Dara and Nizibin (Nisibis) Martyropolis, Fis, and the Kleisurae, Akbas, Klomer and Fum, kitariz and Artales, Eriz and Ognut- Position of Artalia-Enderis-Theodosiopolis and Du-Bol and Pharangion,Shalagom and Okale - Dzanik and Tayk'-Egeria.

WESTERN ARMENIA (Արևմտեան Հայաստան)

Autonomous principalities or satrapies

(Ինքնավար իշխանությունները)

Chapter II:

- Status of autonomous princes- Their distribution with sketch of origins- Ashtiansus and Bababiten – Sophene in the larger sense with position of Anzitiur, Sophene (Dzof), Kharberd (Harput) Ashtishat and Anzit, Anziten as part of Sophene- Disintegration of Sophene and Sophens, Angelens part of larger Sophene- Origin of the autonomous Satrapies - Union of Ashtiaeus and Balabiten with the Satrapies in [A.D] 378:

Chapter III:***Inner Armenia (Ներքին Հայք)***

The component provinces of Interior Armenia and their distribution along the Euphrates – Khordziane (Khordsenakan) and Palatuni, now the Kaza of Kigi (or Kilis)- Mundzut or river Muzur- Daranali near Kamakh- Eklesene near Erzindjan – Dercan, part of the present province of Dercan – Manali and its position according to the historian Lastivertsi - Karin and Shalagom- Alibn-Analibna- Notices of Inner Armenia provinces in western authors, their dislocation in remote times- Analysis of certain names: the characteristic flexion- *ali-eli* and its meaning- Its relation to *aliun* and *alys* -and *Aly-bi* and *Chaly-bi* - Inner Armenia and Dzanik; border zones between Armenia and Dzanik lands –The Dzani and topography of their country-the chief centres where they lay ...

Chapter IV:***Armenia Minor (Փոքր Հայք)***

- Historical fortunes of Lesser Armenian lands their place in Armenian history–Armenian factors in Cappadocia-Cappadocia, the Greater [Cappadocia] and Pontic–Division of it into Strategiae Pontic Cappadocia–Divisions of Cappadocia in Ptolemy–Strabo's account of the strategiae-Peculiar ties of Lesser Armenia- Lesser Armenia properly so called and its five provinces-Orbalisms, Ayreike, Orsene and Orbisus- Their topography Ptolemy's account of the cities-stations along the lines of communications according to the *Itinerarium* and the *Tabula Peutingeriana*-Chief circular route-Interior roads- Examination of them and comparison with modern lines of communicatio–Identification of old centres–Nearer delimitation of Lesser Armenia-Lesser Armenia as an administrative unit in the empire. The *Verona List* and the *Later-*

¹³ Հայաստան գլուխների վերնագրերը համապատասխանում են հայերեն թարգմանության, Երևան, 1988թ.:

culus of Polemius- Data of ecclesiastical geography–Partition of Lesser Armenia into Armenia I and II–Chief cities of both.

Chapter V:

Frontier System

Western Armenia prior to Justinian (Արեւմտեան Հայաստանի քաղաքական կացութիւնը Յուստինիանոսից առաջ)

I. General structure of the Empire–Civilian military authorities– Their chief instruments– I. Armenia I and II in the administrative hierarchy–Their military position *Dux Armenians*–forces under his command and their numbers–Disposition of the forces over the country–Main and secondary military posts–Ranks of commanders–Position of the *Dux Armenians* in the hierarchy–His *officium* - The *Codicillus dignitatum* of the *vicarius* of Pontus and Dux.

II. Position of the Satrapies in Armenia and of Inner Armenia in regard to laws of the Empire- Institution of *foederati* and *foedus non aequum* - Various forms assumed by the institutions – Idea of federation in the Byzantine world - Satraps and *foederati* - Relations of races leagued with the Empire – Genesis of satrapal law - The contractual element in the transition of the Empire- Its union with the empire–Condition of union and the contractual principle in them–Immunity from taxation and *aurum coronarium* – The question of *fopoi dymosioi* -The *comes Armeniae* – The rank of count and the count and the limits of his jurisdiction- The question of *dymosia armeniaka* – Relation of the *comes* to the *nakharar body* – The *nakharaship* in inner Armenia.

Chapter VI:

Reforms of Justinian in Armenia (Յուստինիանոսի վերափոխութիւնները Հայաստանում)

- Characteristics of Justinian and of his reign – His imperialistic policy – Reforming activity – Military *reorganisation* of Armenia -Concentration of military authority in the person of the strategos of Armenia - *Decretum* of Justinian appointing a strategos – The information respecting the matter of Malalas – Discussion of the *Decretum* - Date of the issue- Nature of the powers of the strategos – His army and *officium*- Subordination of the *Duces* – Military occupation of the land – System of defence – Fortresses built by Justinian – Martyropolis, Kitharizon, Artaleon, Karin-Theodosiopolis, Bizana-Leontopolis, Tzumina-Justinianopolis, Satala, Koloneia, Baiberdon, Areon, Lysiormon, Litararizon, Sebasteia, Nikopolis, Meletine – The churches erected by Justinian - Types of fortresses ... 127

Chapter VII:

Civil organisation in Armenia (Հայաստանի քաղաքացիական վերակազմութիւնը)

- Governing motives of reforms in Armenia as part of general provincial reform- Unsettling of the governing mechanism and its causes in the eyes of Justinian-*Suffragium* and its abolition- administrative reform in the system of provincial concentration – Judicial reform - *Novella* instituting four administrators in Armenia - Discussion of the *Novella*- The new divisions: Armenia I, II, III and IV in their territorial relations – Essays in reforms prior to the *Novella*- Acacius and Thomas as agents of reform - Problems pursued by Justinian in Armenia- Criticism of the *Novella*- How is the absence of woman's rights dealt with in the *Novella* to be understood?- Marriage question and dowry in imperial law- **Ferni** and **dwrea** or **dos** and **donatio**, **varjank'** and **awzit** in Armenia -Armenian **proygy** and **towayr** as literary forms of proix and

dwrea – Contemporary survivals of old marriage constructions – Inability of women to inherit clan property – *A diethetism ab intestate* (absence of wills) in Armenia-both phenomena characteristic of western Feudalism -True sense of the *Novella*- Destruction of the *Nakharar* society, one of the chief aims of Justinian – Fiscal interests the leading motives for reforms in general and particularly in Armenia.

Chapter VIII:

Significance of Justinian's reforms in Armenia (Յուստինիանոսի ռեֆորմների նշանակությունը Հայաստանում)

Attitude of Armenians to Justinian's reforms – Their direct consequences – Decay of the *Nakharar* society – Migration of the Armenians into the Empire and the regeneration of Lesser Armenia- Preparation of an ethnic *couche* for the theme of *Armeniakon* and the Armenian Kingdom of Cilicia – Significance of Armenian migration from the point of view of the Empire – Its influence on the fate of Armenia- Influences of imperial reform on Armenia and the greekophil school- Justinian's policy in its bearing upon the interests of the Eastern Empire.

EASTERN ARMENIA (Արևելեան Հայաստան)

Chapter IX:

The Marzbanate (Հայաստանը մարզպանություն)

- Oriental or Persian Armenia the land of *nakharars* – *Nakharar ship* as a factor in Armenian history – Position of Eastern Armenia in the Persian Empire – Administrative structure of the Sasanid Monarchy: *kustaks* and the *sahrs*- Eastern Armenia *sahrs* of the Caucasian *kustak* – Eastern Armenia as a *Marzban* unit – Its relations to neighbouring countries – Frontiers of *marzban* Armenia – territorial correlations of *marzban* and Arsacid Armenia – rise of the frontier provinces – Divisions of *marzban* Armenia according to the *Armenian Geography*- The origin of Siuni, Tayk and Mokk' according to the *Armenian Geography* -Central provinces: *Tanuter* Lands and Vaspurakan territories prior to 591 – The Iranic *gund* and the Byzantine themes – Origins of the provincial divisions which are recognised in the *Armenian Geography*.

Երկրորդ հատոր

14 առանձին դասատետրեր՝ կազմուած մէկ հատորի մէջ՝ բաղկացած 235 + 10 էջերից (6 դատարկ էջ). Ձեռ. Nr. 2261:

Chapter X:

Statistical analysis of Nakharar Society (Նախարարության քանակական վերլուծությունը)

Outlines of the problem-Historico-literary notices of the number of the *Nakharars*-the idea that there were 900 or/400 clans – It's absurdity – Real data about *nakharar* dynasties, materials furnished by historians and *Conciliar* protocols and their revision-Peerage or *gahnamak* and army list, notices of three in ancient authors – Literary criticism of them -Composition of the *gahnamak* as compared with that of the army list- Variants of the *gahnamak* and their significance- Data of Moses of Khoren about the *nakharars* – comparison of them with the *gahnamak* -Comparison of the two documents and relation to them of Moses – Traces of his acquaintance with them- Historical criticism of them – Actual basis of the *gahnamak* – an order of the precedence - Its vitality up to the fall of the Sasanids in the seventh century – Actual basis of the war list was military services, which required as enumeration of the *nakharar* cavalry up to the end

of the eight century – Fundamental characteristics of the document; affinities of it with Zenobius {*Histories of Zenob Glak*} and Moses of Khoren – Historical enquiry into the numbers of the Armenian cavalry – General conclusions – A literary origin for the documents in question to be inferred – Sources of the *gahnamak*, of the War List and the *Ramakan nama* -

Chapter XI:

Territorial analysis of the Nakharar estates (Նախարարութիւնների տարածքային վերլուծութիւնը)

The *nakharar* states as a land unit *nakharar* territory in general – Patronymic and geographical nomenclature in survey of princely estates- Border principalities - Distribution of *nakharar* estates in central provinces – Ararat according to the [*Armenian*] *Geography* – Genesis of geographical divisions and evolution of *nakharar* estates- Basian, Shirak, Ararat par excellence and Bagravand estates of Prince Basian of the Kamsrakans, Arsacids and Bagratids – Smaller principalities in the sphere of influences of the Kamsarakans and on the territory of the Arsacids and their distribution - Bagravand and Kogovit, Turuberan in *Geography* – Chief component parts, Taron and Kharkla [Tayk'] – Transference of Taron to the Mamikonides- Adjacent principalities of Arshruni and Arshamidi, Aspakuni and Khoyt – Kharkh (or Harq) the estate of the Manavazids – Principalities of Apahuni, Khorkhoruni and Bznuni and their relation to Kharkh - Other small principalities Vaspurakan in the *Geography*- Critical observations on its composition – Distribution of the original 18 cantons [*gawars*] – Further subdivisions – Chief proprietary princes he Rushtuni in Tosp, Ardzruni in Albak; *Mardpets* in Mardastan – Relation of the *mardpets* to the Ardzruni – Amatuni in Artaz – Grouping of the principalities round the great houses...

Chapter XII:

Nakhararship and Hierarchy (Նախարարութիւնը եւ հոգեւոր իշխանութիւնը)

1. The church amid *nakharars*. Nationalist tradition about the numberings of bishops and ecclesiastical provinces under the Illuminator there inconsistencies- Data of Ukhthanes and of the Arabic version of Agathangelos – Trustworthy materials in the *Acts of the Councils* of 451, 505, and 555 – Comparative study of them- composition of the clergy in the middle of the fourth century – Conciliar lists of 607 and 644 – Criticism of the list of Bishops in Ukhthanes and comparison of it with signatures of the participants in the Council of 726 -Criticism of Agathangelos list of Bishops- Its confessional bias, the list not earlier than beginning of the seventh century.

II. Positive data for the Armenian hierarchy: the houses of Albrianus and Gregory – the two families represented different strands of Christianity, a southern or Edessene and a western or Caesarean – Historical element in the stories about this -Rivalry of the two families – Ecclesiastical politics – The Gregorids gravitated towards imperial institutions- Structure of the imperial Church – its relation to civil organisations – Powers of metropolitans and patriarchal and their interrelations – Hierarchical ties of church with imperial [churches] – The disruption - Nationalist churches in Armenia – *Nakharar* features in them

Chapter XIII:

Origins of the Nakharar Order. Preliminary excursus (Նախարարութեան ծագումը: Նախնական էքսկուրս)

The problem stated and methods or its solution- Positive and constructive elements in the

study of the question – Imperial principle in the East clan or patrimonial alliance as basis of realm – Clan structure in Iran and its elements: *tauma*, *vitha*, *zantu*, *dahyu*, *zana* – Clan life and the *habicuris-bazar* – Transformation of clanship into feudalism in the Parthian epoch – structure of the Arsacid Empire .

Chapter XIV:

Clan bases of nakharar order (Նախարարութեան տոհմական հիմքերը)

Two periods of Armenian history that of the Tigranids and that of the Arsacid or the ages of the *komarchs* and *strategoi* – clan life in the first period – Ethnology of Armenia – Decisive moments in the formation of Armenian nationality – Its fundamental elements survival of clan forms: *malxaz*, *aspet*, *mamak*, *ter* in a *posteriori* construction – Etymology of these terms which are synonymous signifying the heads of clans in different ethnic layers of society – Differentiation of the clan - Process of assignment – Growth of landed aristocracy – Eminent representatives of the nobility in this period: the four *bdesxs* Bagadates, Mithrobarzanes, and Mankaios as the ancestors of the princely houses of the Bagratids, Sophene, Ardzruni, and Mamikoneans -The *khorkhoruni* house – The appearance of classes in other tribal groups: the *Mardpet* as the leader of the *Mardians*, the prince of *Mokk' or Moxene*, the prince of the *Kurtians* or *Korcek*, hypotheses concerning the origin of the Amatuni and Muracan – Tribal basis of the principalities of Siuni or Sisakan, Shirak, and others – The evolution of the aristocratic castes completed before the advent of Arsacid in Armenia in [A.D] 389.

Chapter XV:

Feudal bases of the Nakharar order (Նախարարութեան ֆեոդալական հիմքերը)

The Tigranid dynasty replaced by the Arsacids – Tridat founder of the new dynasty – His personality; echos of his personal career in Armenian tradition – Parthian realm and its bases – The relation of Tridat to the 120 *strategies* –The situation of Armenia at the time of the appearance of the Arsacids – The feudal organisation of the Parthian Empire and its origins – the social structure of Persia under the Arsacids: *sahridaran*, *vaspuhran* – *vuzurgan*, and *azadhan*, and their interrelations –The Arsacid organisation of Armenia – The distribution of lands and offices: *nakharar*, *nahang*, *azat* – The coalescence of tribal and administrative institutions – Reciprocal terms: *tanuter* and *nahapet*.

II. The feudal aspects of Armenia – The nature of feudalism – Roman and German antecedents in the development of west-European feudalism – The nakharar system as part of the feudalism: *հայրենիք* and *պարզեւականք* as part of land tenure similar to *allods* and *beneficia* – Vassality: *ծառայութիւն* *servitium* – The characteristic features of feudalism –The *seigneurie* as the fundamental institution of feudalism – The Armenian principalities as *fiefs-seigneuries* – Seigneurial legal relationships: [տանու] տէրութիւն- seigneurie the evidence- Feudal relations in the narrower sense: *hommage*, *auxilia*, *consilium*, and their equivalents in Armenia – Sub-infeudation and *sepuh*, its origin - Ostan freedom.

III. Peasant land tenure – Position in the west- Persian system of taxation – Fundamental requisitions the *xaradz* and *gezith* or *sak* and *baz* = *cens* and *chevage bahrak* = *champart*, *kor-bekar* = *corvees*. Statistics of dues and taxes –Result of this work compared with those of Moses of Khoren – Moses as historian of the order of *nakharar* ...

Index of Proper Names* (Անձնանունների ցանկ), էջ. 497:

Index of authors and works cited* (Ցանկ՝ յիշատակուած հեղինակների եւ աշխատութիւնների), էջ. 518:

* Այս երկու տարրերը կա՛մ թարգմանիչը չի կազմել, կա՛մ եղել է երրորդ հատոր՝ այժմ կորցրած: Պատկերացում կազմելու համար Կոնիբերի թարգմանության առաջաբանից եւ եզրակացութիւնից մէջբերում ենք երկու հատուածներ՝ համեմատելու Գարսոյեանի անգլերէն (1970) եւ Է. Հ. Խնդկարեանի հայերէն թարգմանութիւնների հետ (1987):

Introduction:

‘The epoch of Justinian which forms the subject of the present treatise has a peculiar significance no less for the history of Armenia than for that of Byzantium. By it we do not mean the reign of Justinian alone, but that whole period which intervened between the Roman and Byzantine epochs. It is the transitional age between the ancient empire and that of the middle ages...’

Երկրորդ հատորի եզրակացութիւնը

‘Our conclusions are doubtless largely hypothetical and a priori but so more or less are all historical constructions. The important point is whether we have succeeded in discovering the roots of nakharar institutions, how far credible is our tracing of their ulterior developments, how far acceptable are the resemblances we have indicated between them and the feudalism of Western Europe. We say in our investigation to throw a gleam of light through the gloom which broods over Armenian antiquity prior to the advent of the Arsacids, and to lay the foundations of a scientific understanding of the great period which followed of Armenian history until the nakharar society perished in the age of Mongol conquest’.

Ֆ. Կոնիբերի «Լոնդոնի գրադարանին» կտակած հայ հնատիպ գրքերը

Bar-code (38044 00802 4201)

Thomas A. Kempis

1. Գիրք Թոմայի Քեմփացույ Յաղագս Համահետեւման Քրիստոսի: Թարգմանեցեալ ի Յոհաննիսէ յովսէփեայստ Վարդապետէ Կոստանդինուպօլսեցույ: Ի խորոյ Զուղայեցի խօջա Սահրատի որդւոյ պարոն Գասպարին: Գործօք և ծախիւք Թոմասու սրբափայլ եպիսկոպոսի սրբոյ խաչին:

Յամատէլլօղամի, տպ. Թովմաս Վանանդեցու, 1696:

Ոսկանեան Ն., ՀԳ, 1512-1800, հմմտ. 163; Nersessian, Catalogue, nr. 61, p. 57.

2. 93746

Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Յոհաննու, թարգմ.՝ Կիրակոս վարդապետի: Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարգուլանեցու, 1717. ii+982 էջ; (15.5x 10.6 cm):

Ոսկանեան Ն., ՀԳ, 1512-1800, nr. 294; Nersessian, Catalogue, nr. 95

Գիրքն ունի Օքսփորդի Բոդլէեան գրադարանի գրողմը՝ դրոշմուած «չեղեալ 15 Յունուար, 1925». ‘Bibliotheca Bodleiana’ չեղեալ դրոշմներ կան ԴՃԲ (402), ԵՃԻԳ (526), ՂՃԺԳ (656) էջերի վրայ:

Ֆ. Կ. Կոնիբերի ծանօթագրութիւնը F. C. Conybeare’s ‘Collation agrees with copy in the Bibl. Nat. where date is given as 177’.

Յետագայի մի արձանագրութիւն՝ առջեւի պահպանակի վրայ Later inscriptions: «Թուին ՌՄԻ [1220] Տէր Ալեգսանն գնաց ի սուրբ Երուսաղէմ Տէր Ա[ստուա]ծ բարին յաջողում տացէ, ամէն»: Վերջին թերթի դարձերեսին կայ ներքոյ յիշատակարանը.

«Այ իմ անուշիկ եւ քաղցիկ պիտական

սիրելի եղբար թողիր ինձ առանց
եղբոր սիրոյ առ
Աստուած փոխեցար յետ թողիր
իմն անպէտ եղբոր»

Կրկնում է դիմացի թերթի երեսին.

«Այ իմ անուշիկ քաղցիկ
Սիրելի եղբար ինձ թողիր
Առանց եղբար առ Աստուած
Փոխեցար թողիր իմն անպէտ եղբոր»

Տիտղոսաթերթի դարձերեսին կայ մի կլորածեւ կնիք՝ «Ք[րիստոս]ի Ծ[առա]յ Ալեգսան»* արձանագրութեամբ:

* Մկրտիչ Եպս. Աղաւնունին իր *Միաբանք եւ այցելութեւ Հայ Երուսաղէմի*, Երուսաղէմ, 1929, էջ. 12-13. ունի հիշատակութիւն Ալեգսան մեղ:

3. 9871

Դաւիթ Անյաղթ, Գիրք Սահմանաց Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայի եւ Աստուածաբան վարդապետի: Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու, 1731.

Ոսկանեան Ն. ՀԳ, 1512-1800, nr. 390

Գիրքը նուիրուել է «Լոնդոնի Գրադարանին» Յունուար 15, 1925 թ.-ին: Այն ժամանակին պատկանել է անուանի արեւելագէտ Մաքս Միլլերին [M. Friedrich Muller], Վիեննա, 1877, որի անդրանիկ դուտորը ամուսնացել էր Կոնիքերի հետ: Առջեւի պահպանակի վրայ կայ տպագիր երկսին էջ, որը պարունակում է մի հատուած Մարկոսի Աւետարանի 16-րդ գլխից, իսկ հետեւի կազմի վրայ փակցուած է տպագիր մի էջ Սաղմոսաց գրքի Սաղմոս 98, էջեր 127-128:

* ‘P’. Miwller’ [Friedrich Muller], in Zarbhanalian, Garegin, *Usumnasiroutiwnk’ Hay lezvi ew Matenagrout’ean Yarewmouts [= Les Etudes Armeniennes en Europe (siecles XIV-XIX)]*, Venice, 1895, pp. 295- 304.

‘Max Muller, Friedrich (1823-1900)’, *The Concise Dictionary of National Biography. From the earliest times to 1985*, Oxford University Press, 1995, vol. II, pp. 1993.

4. 98670

Սարգիս Շնորհալի, Գիրք Մեկնութեան եօթն թղթոցն Կաթողիկէից արարեալ Սրբոյ Վարդապետին Սարգսի Հայոց Իմաստասիրի: Կ. Պոլիս, տպ. Աբրահամ Թրակացու, 1743:

Ոսկանեան Ն. ՀԳ, 1512-1800, nr. 473; Nersessian, *Catalogue*, nr. 133

Ֆ. Կ. Կոնիքերի կտակից Փետրուար, 1928. Թղթեայ պիտակ փակցուած հատորի կողին գրուած «Սարգիս, Մեկ. 1743, Թուին Հայոց, 1192». իսկ պահպանակի վրայ Կոնիքերի ձեռքով գրուած ‘Comm[entary] 7 Epistles Catholic’.

5. 98728

Եղիշէ, Գիրք Պատմութեան Սրբոց Վարդանանց զօրավարացն Հայոց, Կ. Պոլիս, «ի տպարանի հանգուցեալ [Յովհաննէս Աստուածատրեանի]», ՌՄԺԳ = 1764:

Ոսկանեան Ն. ՀԳ., 1512-1800, հմմտ. 598.

Հեղինակի փայտփորագիր պատկերի յետադարձ երեսին կայ այս արձանագրությունը.

«Եղիցի յիշատակ է այս պատմութեան գիրքս Տէր Յօհան Զորաթանայ, որ ետ Տէր Զաքարիա քահանայի Տէր Դաւթեան 1834 Դեկտեմբերի 20 եւ զկնի լըրման տարուն բ[ի]ոշմանեաց (sic) ետ առաւ յինէն».

6. 4762

Յովհաննէս Հաննայ, Գիրք Պատմութեան ս[ր]բոց] և մեծի Քաղաքիս ա[ստուծոյ] Ե[րուսաղ]էմիս և ս[ր]բոց] Տնօրին[ա]լ[կա]նաց Տեղեաց Տ[եառ]ն մերոյ Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի, Կ. Պոլիս, տպ. Յովհաննէս Աստուածատրեանի, 1767 [-1768].

Ոսկանեան Ն. ՀԳ., 1512-1800, nr. 606; Nersessian, *Catalogue*, nr. 163.

Գիրքը տեղագրուած է մի տուփի մէջ՝ ծածկուած կարմիր կտորով. տիտղոսը ոսկեայ տառերով՝ դրոշմուած կողի վրայ: Գրքի առաջին էջի վրա գրուած է տիտղոսի անուանումը տառադարձութեամբ. ‘Hovhannes Aghawni, Girg patmuthean sbh ev medzi galaqis ah Eemis (Book of narration of the Holy and Great City of God, Jerusalem, 1767).

Տիտղոսաթերթի վրայ կայ այս անգլերէն ծանուցումը.

“Compiled for celebrations dominical pilgrim for who in faith in hope and in love have recourse to the Holy city by sea by dry land or of spiritual comfort”.

7. 98667

Տօնացոյց նախապէս կարգեալ և սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթեւի, էջմիածին, տպ. Ս. Գրիգորի Լուսաւորչի, 1774-1775 {ՌԶԶԴ = ՌՄԻԴ}.

Ոսկանեան Ն. ՀԳ., 1512-1800, nr. 655; Nersessian, *Catalogue*, nr. 178.

Գրքի առջեւի կազմի ներքին երեսին կայ անվարժ բոլորգրով հետեւեալ ծանուցումը.

«Վասն քարօզին թէ որում ձայնի որ քարօզն ասել պարտ է. Այս է ութն ձայնի քարօզս [The eight modes of the services].

«Վասն ի Գիշերի»

.....

«Վասն ի վերուստ»

Գրքի տիտղոսի լատիներէն թարգմանութիւնը. “Bipul del eglise Armenien ne parte patriarch Sahag le Parthe (5 siecle), Const. 1774: Մի փոքրիկ պիտակ փակցուած առաջին էջի գլխավերեւի անկիւնում դրոշմուած է անունը եւ հասցէն գրախանութի. “Maisonneuve & Cie, 15 Quai Voltaire, Paris”.

Նոյն էջի վրայ կայ այս յիշատակարանը.

«Յիշատակ է [Ա]մսրտամու Հայոց ազգի սրբոյ եկեղեցւոյն ի սուրբոյ գահոյն էջմիածնէ շնորհեցեալ ՌՄԻԴ[=1775] ի դեկտեմբերի Ժե [15] Նսայի վարդապետին ձեռամբն առաջնորդին Իզմիրու քաղաքիս».

«Ամստերտամի Ս. Հոգի եկեղեցին շինուել է 1714 թուին Dijkstraten փողոցի Krom Boomsloot-ի կամուրջի միւս երեսը: Այս եկեղեցին կը մնայ մինչեւ հիմայ» Տես: Հրաչեայ Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն Երեւան, 2002, էջ. 733:

8. 98544

[Andrew [Bishop of Caesarea] and Aretas]

Մեկնութիւն Յայտնութեան Ս. Աւետարանչին Յովհաննու: Արարեալ Տ. Անդրէի եւ Արեւմտայ Եպիսկոպոսին Կեսարու: Թարգմանութեամբ ի յոյն բնագրէ եւ սրբագրեալ Տ. Ներսէսի Արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցոյ: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1855.

Ոսկանեան Ն. ՀԳ., 1851-1900, nr. 342.

Ա. Ղազիկեանն իր Հայկական Մատենագիտութեան մէջ (էջ. 1945), այս գրքի առաջին հրատարակութիւնը համարում է Կ. Պոլսի 1700 (1701) թ., որն ըստ իրեն, թարգմանուել էր հայերէնի լատիններէնից՝ Պետրոս Վրդ. Թիֆլիսեցու կողմից, որը կրկնում է Հայկ Դաւթեանն իր՝ Հայ Գիրքը 1512-1800 թ. (էջ. 134, nr. 182): Գարեգին Զարգանալեանը սխալմամբ գրքի հեղինակին համարել է Անդրէաս Կրետացուն [Andre, Eveque de Crete]: «Յիշատակարան թարգմանութեան մեկնութեան գրոցն Յայտնութեան» յիշատակարանի մէջ Սմբատ Եպս. Սաատէթեան գրքի թարգմանութիւնը համարում է կատարուած յունարէնից եւ այն վերագրում Կոստանդին անունով յոյն քահանայի. «նա ի թարգմանել եւ ես ի գրել»¹⁴:

«Լոնդոնի Գրադարան»-ի օրինակը կրում է այս անգլերէն տիտղոսը. ‘Andrew abp. of Caesarea. Commentary Apocalypse St. Evangelist John compiled Andreas and Arctas eposc. Caesarea, tr. Nerses abp. of Tarsus.

Այս օրինակի մէջ գտնուող ծանօթագրութիւնները, վրիպակների ուղղումները, յաւելումները, փոփոխութիւնները կանաչ թանաքով լուսանցքներում՝ Կոնիքերի ընթեռնելի ձեռագրով, յուշում են, որ նա միտում ունէր այն թարգմանել անգլերէն կամ պատրաստել քննական բնագիր: Այս ենթագրութիւնը հաստատում է առաջին պահանջի վրայ իր գրածը. “Collated in with W. San Lazar and MS 1572 of commentary of Andreas, written on paper double columns in notragir of the 18 thc. Also W. S. Lazar’s 1230 a ms paper in single columns written in A. D. 1361 in small cursive by Jacob son of Simeon of Koksou city ordained priest at St. Jacob’s, son of Zebedee at Jerusalem, written out in Jerusalem in arm[enian] patriarchate’. The dissenter of this w 1572 is marked in ch[apter]s 1 x 2 and 18x19”.

Թուղթ առ Փիլիմոնի վերջին էջի վրայ (fl. 292v), տեղագրուած է յիշեալ յիշատակարանը. «Ներսէս նուստ եպ[իսկոպոս] Տարսոնի սիրով վաստակաւոր ի սուրբ մատեանս, զոր ծերացեալ գտի ըստ հելլենացոյդ և նորոգեցի ըստ հայոյդ շնորհ ի աղաւթից լիցիմ իւր վայելողացդ արժանի»:

Բազմաթիւ ուղղումների շարքին ուշագրութեան արժանի են հետեւեալները. «եւ Պապիաս ի խոսս» (p. 165) «Իրենէոս ասաց. ի կիր արկեալ ընդ բանս իւր» (p. 99) «Իրենէոս զբանս Յուստինոսէ վկայի այսպէս» (p. 167) եւ այլն:

14. «Յակոբ սարկաւագ գրիչ. որդի Սիմէոնի և թոռն Յակոբ քահանայի. օրինակել է Կիրեղի «Կոչումն ընծայութեան», ստացող Մինաս կրօնաւորի համար, շուրջ 1398 թ. -Ձեռ. Թաւրից. էջ. 28» Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, Հտ. Գ., եր., 1946, էջ. 496, համ. 129:

9. 98119

John Chrysostom, Patriarch of Constantinople.

Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի: Հատոր երկրորդ. Մեկնութիւն Հոովմայեցոց: Հատուածք, ճառք, երկբայականք:

¹⁴ Սաատէթեան Սմբատ Եպս., Ներսէս Լամբրոնացի, Ամթիլիս, 1981, էջ. 194-195; F. C. Conybeare, The Armenian version of Revelation and Cyril of Alexandria’s scholia on the Incarnation and Epistle on Easter, London, 1907; Պետրոսեան Եզնիկ Եպս. և Տէր-Ստեփանեան Ա., Ս. Գրիգորի հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն, ՀԱԸ, Երեւան, 2002, էջ. 126, համա. 49, Յակոբեան Գ., Ներսէս Լամբրոնացի, Երեւան, 1971, էջ. 300-302 «Յովհաննու Յայտնութեան մեկնութեան թարգմանութիւնը» եւ էջ 354-355, «Յիշատակարան թարգմանութեան մեկնութեան գրոցն Յայտնութեան»: Մեկնութեան թարգմանիչը համարում է «Այլև Կոստանդին մետրապոլիտն որ թարգմանեաց»-ը :

Վենետիկ, տպ. Սուրբ Ղազար, 1862 [ՌՅԺԱ].

«Մատենագիտութիւն նախնեաց: Ոսկեբերան»:

Հայկ. Դաւթեան, **ՀԳ**, 1851-1900, nr. 1101, p. 88, **Եզնիկ Եպս. Պետրոսեան, Արմէն Տէր-Ստեփանեան**, նշում աշխ.

nr. 46. էջ. 125

Դիրքը կազմուած է դեղին կտորով “Chrysostom, Saint, Commentary Epistles Paul”: Կողը դրոշմուած ոսկեայ տառերով՝ ‘Chrysostom.Armen’: Առջեւի կազմի վրայ կայ փակցուած կարմիր տպագիր պիտակ՝ ոսկեայ գրութեամբ. London Library, St James’s Square. F. C. Conybeare Bequest Library stamp ‘22 January, 1926’ :

Առջեւի կազմի դիմատետրում կան այս ծանօթագրութիւնները.

«Կոյս անախտաբար ծնանի»

«Կին մեղաւոր օրինակ եկեղեցւոյ»

«Ի կինն մեղաւոր եւ ի գալուստն Քրիստոսի Յերուսաղէմ»:

«Կոյս ասեմ զեկեղեցի երկնային փեսային առանց թշնամանաց յարմարեալ, որ և որդիս այ անանխտաբար ծնանի խորհրդաբար մկրտութեամբ».

«Կինն այն օրինակ է եկեղեցւոյ, մեղաւոր նախքան զՔրիստոս, այլ պարկեշտ զկնի Քրիստոսի»:

Կազմի ներսում փակուած կայ մի ծրար՝ հասցէագրուած ‘Hochwohlgeb Herrn Prof. Dr. C. Fred. Conybeare, Hotel Rinicio, Rome, Italy. Գնուած եւ փոխհասցէագրուած ‘17 Bradmore Road, 58 Holywell, Oxford, England’.

Ծրարի մէջ կայ մի նամակ գերմաներէն լեզուով՝ թուագրուած 10/XI/1909: Նամակաթղթի հասցէն պատկանում է Կ. Պոլսի Մխիթարեան Միաբանութեանը: Միաբանութեան անուան եւ կնիքի սկզբնատառերը **ՈԿՎ Ա** [Որդեգիրք Կուսին, Վարդապետք Ապաշխարութեան] եւ միաբանութեան հասցէն՝ հայերէն եւ ֆրանսերէն:

ՎԱՆԱՏՈՒՆ

ՀԱՐՅ ՄԽԻԹԱՐԵԱՆՅ ՎԻԵՆՆԱՅ

Ի Կ. ՊՈԼԻՍ ԲԱՆԿԱԼԹԻ

COUVENT DES

PP. MECHITHARISTES DE VIENNE

CONSTANTINOPLE (PANOALDI) [erased].

Գերմաներէն նամակի հեղինակը՝ Մխիթարեան Միաբանութեան անդամ (1885 թ.) Յակոբոս Տաշեանն է (1866-1933): Զեռագրագէտ, բանասէր, լեզուաբան, հայագէտ: Ներքեւում տալիս ենք նամակի անգլերէն թարգմանութիւնը.

“Dear Friend,

Your esteemed letter with the fragment in question has been forwarded to me here. I left Vienna at the end of September because I was sent here for a longer stay. I will stay here surely for a year, possibly even longer. Only recently, I have received the suitcase with the necessary aids, which I had taken with me. So, I could start to take a closer look at the fragment in question. I am delighted to say, that finally I have succeeded in the identification, although the library in this place is still not sufficient for this sort of research.

From the beginning it was clear, that this is a piece of Chrysostomus. With the help of my small concise dictionary, I could verify numerous terms from different sources of Chrysosto-

mus. However, I also found terms which refer to a slightly later period. The fragment, therefore belongs to the group of the many Sermons of Chrysostomus whose Armenian text was later either translated, or revised. For sure, many of these sermons are ancient translation but the texts in the collected editions (հաղթանակագրեր).

Hence, I started searching in the “sermons” and finally found in the “Sermon” about indistinctness of the Old Testament, etc. editions in the Sermons of Saint Chrysostomus, Venice 1861, pp. 422-446. (I do not have a Greek text at hand in order to make a note of the title after P. Zarbhanalian “*eis ...diat'ikis*” etc. Obviously, the supplement of Codex Vaticanus 16 is bound in reverse, because the beginning of the fragment is II, vol. I, then vol. 2 and only then Side I, vol. I and 2 = ed p. 435 Z 22 to the end of p. 436. I made a copy of this whole part of the edition (see supplement) so that you can more easily compare the texts.

In addition: the great Venetian dictionary (Հայկ[ազեան] Բառ[գիրք]), II col. 606) quotes a part of the fragment as follows «Յորժամ զոք ամբարդաւանեալ տեսանիցես, զվիզն բարձրացոցանելով և ի վեր պրկելով. Ոսկ. Մրգր» this is a part of the “Sermon about the Prophets”. However, I do not know whether the sermon really is [...] as in the Venetian manuscript, or only an extract. It is possible, that its title is not at all correct: in a hand written catalogue of the venetian manuscript there is no such title to be found. Rev. P. Aucher [Awgerian], who just recently investigated the *oeuvre* of Chrysostomus works in Armenian literature, should be able to give more information about this.

I am delighted to know, that you have begun to catalogue the Armenian manuscripts in Rome. I will be happy to be of help. Here, following is my address. Since we have a post box in the Austrian Mail (of Constantinople), every letter is as safe as in Europe. However, it always needs to be marked ‘Austrian Mail’; otherwise, it risks to be given to the Turkish mail [*few faded lines*].

The notes in the Armenian is: Տ=կիրացի Չինեսիչեան etc. I read Տիգրանակերտցի, i. e. *Tigranacerta* which is Diarbekir: Չինեսիչեան is a family name and means in Turkish ‘chinless’ turk չինե, dialect չինե etc. is ‘chin, cheeks’ չինե-սիչ ‘without cheeks, without chin’. Hence, the writer of this note is the Catholic Wardapet (=Hochwuerden) Mesrop Cenesizean from Diarbekir, in the year 1875.

Yours faithfully,
P. J. Dashian

Meine Adresse:
P. J. Dashian*
Wiener – Mechitharist
Constantinople
Oesterreichische Post
Fouch 115.

*ՀՀՀ, հտ. 4, Երևան, 2003, էջ 687, Յուլյան Գրական ժողովածոյ, Վիեննա, 1911, էջ. 53-54:

10. 89654

Առաքել Սիւնեցի, Աղամ Գիրք: Անցք Աղամայ նախաստեղծին, Կ. Պոլիս, Մատթէոս Դպիր, 1799:

Ոսկանեան, Ն. ՀԳ, 1512-1800, nr. 970, Nersessian, *Catalogue*, nr. 250.

Հատորը պատկանելիս է եղել Ֆ. Միլլերին, Վիեննա, 1877 Adam Buck Constantinople, 1700: Գրքի վերջին էջի վրայ կայ Բողլէեան գրադարանի չեղեալ համարուող կնիքը:

11. 98714

Աբրահամ Աստապատցի, Ներբողեան Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, Կ. Պոլիս, տպ. Պօղոս Յովհաննիսեանի (Արապեան), 1807:

Հ. Դալթեան, **ՀԳ**, 1801- 1850, nr. 106, Բրիտանական գրադարանի օրինակը, ORB 30/4387 [Արտաշէս Խաչատուրեանի «Տարօն» հաւաքածոյից]:

Բողլէեան Գրադարանի չեղեալ կնիքը՝ թուարկուած Յունուար 16, 1924: Fred. C. Conybeare, Viro doctissimo humanissimo amicissimo d. d. Ludovicus Petit e Soc. Aug., Abass Constantino-poli, die 7a dec. 1902:

12. 3629

[Գրիգոր Լուսաւորիչ], Գիրք, որ կոչի Յանախապատում ի հայրապետութեան Սրբոյ էջմիածնի Տեառն Եփրեմ Ամենայն Հայոց կաթողիկոսի... յամի Տեառն 1813, ի Կալկաթայ ի տպարանի Աւետ Զընթլումեանի.

Գրքի կազմի ներքին երեսին կայ փակցուած գրադարանանիշ՝ մականգրուած. «Գիրքը նուիրել է Լոնդոնի Գրադարանին «Ստեփան Ֆ. Բ. Լինչը՝ 1942 թուականին»¹⁵:

էջ 391. վրայ կայ մի կլորաձեւ կնիք՝ «Լոնդոն Գրադարան» հասցէն, 1847 թ.:

13. Յակոբ Մծբնայ Հայրապետի, Գիրք, որ կոչի Զգօն: Արարեալ սրբոյն երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի: Կ. Պոլիս, Հասան փաշա խան, տպ. Մհտ. Յօհանեան, մհտ. Աբրահամ Թերզեանի, 1824:

Հատորի ողնաշարին կայ ոսկեայ տառերով գրքի վերնագիրը: Բողլէեան գրադարանի չեղեալ համարուող կնիք՝ թուագրուած Նոյեմբեր 6, 1924: Առջեւի կազմի պահպանակի վրայ կայ այս մականգրութիւնը. “Afrahat the Persian sage 4th century, Book called Wise”, see Nicene and Post Nicene Fathers. 1898 թ. Լոնդոնում լոյս է տեսնում «Խիկարի պատմութիւնը» ժողովածոյի հայերէն բնագրի քննական տարբերակը՝ ասորերէն, արաբերէն, եթովպերէն, յունարէն, սլաւոներէն տարբերակներին զուգահեռ: Տես F. C. Conybeare, R. Harris, A. S. Lewis, The Story of Ahikar from the Syriac, Arabic, Armenian, Ethiopic, Greek and Slavonic versions, London, 1898; 2nd edition enlarged and corrected Cambridge 1913., **Պարոյր Սահակեան, Երկու դրուագ Ֆրեդերիկ Կոնիբերի Հայագիտական ժառանգութեան, Երեւան, 2003, էջ. 6-22** «Խիկարի իմաստունի պատմութեան եւ խրատների Կոնիբերեան մեկնութիւնը» :

ԳՈԿՏ. ՆԵՐՍԷՍ ԱԻ. ՔՇՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

¹⁵ “Towards the end of 1835 Mr. Stephen Lynch arrived to relieve his brother Mr. Tom Lynch, who accompanied Captain Stephen Finnis Blossie Lynch home in 1836. Captain Felix Jones of the Euphrates Expedition fame succeeded Captain F. B. Lynch. Lynch’s can be considered as the pioneers of the export of wool from Mesopotamia where before 1840 the wool was not an article of export. The company was called Lynch Brothers but later the Baghdad branch was called after Mr. Stephen Lynch. Mr. Stephen Lynch married Miss Hosanah the daughter of Mr. Catechik Mackertich [Խաչիկ Մկրտչեան] the then British vice Consul in Baghdad. The retirement letter from the company to David Thaddeus in signed by Stephen Lynch dated 5th May 1939” Letters of David Thaddeus (in the authors collection):